ՆՈՐ-ԴԱՐ

№ 73 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 11 Մայիսի 1902 Շաբաթ, 11 Մայիսի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 73

Տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., համար 5 կ.:
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են — Բատալփաշինսկից:
Այց Ց. Խաչումեանի շիրմին:
Իմ պատասխանը:
Քաղաքական. — Թիւրքիա:
Սպանիա:
Մարտինիկի աղէտը:
Հեռագրական լուրեր:
Թեր և դէմ
Ֆէլյիետոն.—Գիսաւորի յիշատակարանը:
Յայտարարութիւններ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Սրբազան Օրմանեան պատրիարքը Բ. Դրան խնդրամատոյց է եղել, որ կառավարութիւնը թոյլ տայ Ռուսիա փախած հայերին վերադառնալու իրենց հայրենիքը: Վիեննայի «Neue Freie Presse»-ին Կ. Պոլսից հեռագրում են ապրիլի 29 ից, որ պատրիարքի այդ քայլը եռանդուն աջակցութիւն է գտել ռուսաց դեսպան պ. Զինովևի կողմից:

—«Պրավիտ. Վեստ.»-ում տպւած է. «Անցած ապրիլի 26-ին Պետերբուրգի զինուորական-նահանգական դատարանում քննուեց ներքին գործերի հանգուցեալ մինիստր եգերմայստեր Սիպեագինի դիտաւորեալ սպանութեան համար դատի մատնուած Ստեպան Վալերիանով Բալմաշեվի գործը: Զինուորական նահանգական դատարանը, Բալմաշեվին մեղաւոր ճանաչելով, վճռեց զինուորական-պատժական կանոնագրութեան XXII գրքի 279 րդ յօդուածի հիման վրայ, զրկելով կարողութեան բոլոր իրաւունքներից, դատապարտել նրան մահուան պատժի կախաղանով: Դատապարտեալի տուած վճռաբեկ բողոքը քննեց զինուորական գլխաւոր դատարանն ապրիլի 29-ի նիստում և թողեց անհետեւանք: Սոյն մայիսի 3-ին դատավճիռը գործադրուեց քրէական դատավարութեան 963 և 964 յօդուածների կարգով»:

— Մի խումբ ջրաբաշխ-տեխնիկներ են գնացել Սարդարաբաթի տափաստանը (Երևանի նահանգ) և հետազօտութիւններ են կատարում այդ տափաստանը ջրաբերի դարձնելու համար, որովհետև մտադրութիւն կայ այդտեղ բնակեցնելու ռուս գաղթականներ:

— Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի կոյրերի խնամակալ հոգաբարձութեան Կովկասի ճիւղը, կովկասեան հանքային ջրերի վարչութեան և Պեատիգորսկ քաղաքի նիւթական օժանդակութեամբ, այս տարուայ ապրիլի 23-ին Կարմիր Խաչի ընկերութեան Պեատիգորսկի գաղութին կից բաց է արել ակնաբուժարան, ուր ձրիաբար ընդունւում են աչքացաւ ունեցող չքաւոր հիւանդներ, դեղեր են տրւում և պահւում են գիշերօթիկ հիւանդներ: Կարմիր Խաչի ընկերութիւնն ակնաբուժարանի համար ձրիաբար տուել է մի շէնք և բժիշկներ: Ակնաբուժարանի կառավարիչն է ակնաբոյժ Գ. Ա. Գարբուզով, որն ընդունել է այդ ծանր ու մարդասիրական պաշտօնը ձրիաբար: Կարելի չէ չուրախանալ, որ այդպիսով հոգաբարձութեան գործունէութիւնն ընդարձակուել է, և յոյս ունենանք, որ նոր ակնաբուժարանը, բարի մարդկանց ընդհանուր համակրութիւնը վայելելով, կը տայ իրենից սպասելի օգուտները բնակչութեանը:

— Մայիսի 6-ին, գիշերը, աքսորանքից փախած երեք հոգի զինուած չարագործներ մտնում են եղբ. Օկունեւների ձկնորսական վաթաղը, որը գտնւում է Բագու-Պետրովսկի երկաթուղու Սունհարտ կայարանի մօտ, զօրով խլում են Ի. Ֆ. Օկունեւից 800 ր., և նրա փոքրիկ եղբօրը տանում են իրենց հետ, ասելով թէ այդ տղային կը վերադարձնեն այն ժամանակ, երբ դրա համար 200 ր. փրկանքի գին կըստանան: Դրանից յետոյ նոյն չարագործները գնում են Տէր-Ստեփանեանի ձկնորսարանը, որտեղ նոյնպէս 800 ր. խլելուց յետոյ անհետանում են, տանելով իրենց հետ երկու ձի: Աւազակները, 200 ր. փրկանքի գինն ստանալուց յետոյ, բաց են թողնում փոքրիկ տղային: Գիւղական հեծեալ ստրիկաններն ընկնում են աւազակների ետևից, սպանում են նրանցից երկուսին, իսկ մէկին բռնում են ողջ ողջ: Սպանուած է ստրիկաններից մէկը:

— Ստացել ենք նկարիչ-լուսանկար Ս. Սողոմոնեանից իր հրատարակած հանգուցեալ յայտնի տրագիկ Պետրոս Ադամեանի լուսատիպ պատկերը: Հրատարակիչն այդ լուսատիպ պատկերը հրատարակել է «ի պատիւ Թիֆլիսի հայոց նորակազմ դրամատիքական ընկերութեան». պատկերը լաւ է և հանգուցեալ Ադամեանի յաջող լուսանկարիցն է:

— «Փարս» գեր-թատրոնի խմբի ներկայացումների պատճառով ընդհատուել էին Պասխալովա տիկնոջ ներկայացումները, որոնք ներկայումս վերսկսուեցան արտիստիքական ընկերութեան թատերասէրների մասնակցութեամբ: Արդէն խաղացին «Տրիլբի» և «Հանքագործ» ծանօթ պիէսները: Առաջին ներկայացումը թոյլ էր. Սվինգալի դերը կատարում էր Վէյմանը, որ ըստ ինքեան բաւականին շնորհալի թատերասէր է, բայց այս դերում չկարողացաւ սպասելի տպաւորութիւնն անել, որովհետև դերն իրեն յարմար դեր չէ և նրա ձայնը չունի այդ դերի հզօր, հարկաւոր հնչիւնը, ոյժը և գոյնը: Պասխալովան կատարեց Տրիլբիի դերը իրեն յատուկ պարզութեամբ և սիրտ շարժող զգացմունքով. բայց նրա խաղի ընդհանուր տպաւորութիւնը թոյլ էր: Աւելի լաւ էր և գեղեցիկ իր բնական ու պարզ խաղով Պասխալովան «Հանքագործ» պիէսի մէջ, և առհասարակ թէ Վէյմանը, թէ Մակարովը և թէ միւսները վերջին պիէսում աւելի լաւ խաղացին և, պէտք է ասել, պիէսն էլ աւելի լաւ պիէս է:

Մայիսի 1-ից «Նոր-Դար» ին բաժանորդ են գրւում և վճարում են 7 ր. 25 կ.

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲԱՏԱԼՓԱՇԻՆՍԿԻՑ.— Տեղիս և շրջակայքի հայ գաղութը երկար ժամանակ առանց սեպհական քահանայի մնալուց յետոյ, նախկին երէցփոխը դիմեց Վեհափառ Կաթողիկոսին և յայտնեց ժողովրդի անմխիթար դրութիւնը, քանի որ Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսը, մեր նախկին քահանայի Հին-Նախիջևան գնալուց յետոյ, մեզ թողեց առանց քահանայի, և եկեղեցին փակուեց: Չգիտենք որտեղից մեր առաջնորդն առանձին գրութեամբ տեղս է ուղարկում Նոր-Բայազետցի Եսայի քահ. Տէր-Թադէոսեանին, որը, իր ընտանիքը թողած Բայազէտում, շրջելիս է եղել Աստրախանի թեմում և ամէն կերպ աշխատելիս է եղել մնալու Գէորգիևսկում, բայց չէ յաջողուել: Ժողովուրդը երկար ժամանակ առանց քահանայի մնալով այնքան էր յուսահատուել, որ անճարացած ընդունում է այդ քահանային, մանաւանդ որ սրբազանն էր ուղարկել: Բայց մեր կոյր բաղդից տ. Եսային անհամապատասխան է լինում իր պաշտօնին: Այդ պատճառով ժողովուրդը երես է դարձնում նրանից և սառչում է մայրենի եկեղեցուց: Չգիտենք, ինչ անենք, ում դիմենք և ինչպէս ազատուենք Արիստակէս սրբազանի ուղարկած մարդուց:

ԱՅՑ Ց. ԽԱՉՈՒՄԵԱՆԻ ՇԻՐՄԻՆ

Ուղիղ վեց տարի սրանից առաջ, 1896 թուականի մայիսի կիսին, Լայպցիգից «Նոր-Դար»ին խփած մի հեռագիր գուժեց նրան և նրա բարեկամներին, ընդհանրապէս հայ ընթերցող հասարակութեանը, թէ չկայ այլ ևս Խաչումեան... Այս բօթաբեր լուրը կապարի նման ծանրացաւ իւրաքանչիւր մի հայ մարդու սրտի վրայ, որ ճանաչում էր Խաչումեանին, կարդացել էր նրա վառվռուն, առողջամիտ յօդուածները: Յիշում եմ, այն ժամանակ, դեռ դպրոցական աշակերտ, որ հիացմունքով հետևում էի Խաչումեանի գրութիւններին, լուրը ծանր, խիստ ծանր ազդեց նաև ինձ վրայ: Զգում էի, որ հայ մամուլը, ընթերցող հասարակութիւնը յանձին նրա կորցրեց մի թանկագին հարստութիւն:

Մի ներքին ձայն Լայպցիգ տեղափոխուելուց յետոյ դրդում էր ինձ, յիշեցնում այցի ելնել Խաչումեանի շիրմին:

Եւ գնացի դէպի Լայպցիգի գերեզմանատներից մէկը, Südfriedhof, որտեղ ամփոփուած է հանգուցեալի մարմինը: Դեռ գերեզմանատուն չհասած մտածում էի, թէ անտարակոյս անտէր-անխնամ թողնուած կը լինի Խաչումեանի գերեզմանը. չէ որ նա ղարիբ մեռաւ օտար աշխարհում, իսկ ղարիբի վրայ ո՞վ է ուշադրութիւն դարձնողը, ո՞ւր մնաց նրա գերեզմանի վրայ. և այն, անհիւրընկալ Եւրոպայում: Ով գիտէ, թէկուզ մի հասարակ տապան էլ քաշած կը լինի՞ գերեզմանի վրայ,—մտածում էի:

ՖԷՅԼԻԵՏՈՆ

ԳԻՍԱՒՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(Տեսած ու լսած բաներ ս. Էջմիածնում)

II.

ՍԱՏԱՆԻ ԲԱՐԵՍԻՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐՕՆԱՒՈՐԻ ԱՌԱՍՏԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ

Ես, Գիսաւորս, ուղարկեցի իմ աբբանեակներին աշխարհ պտտելու և լրտեսելու: Իմ աբբանեակներս իմ գէսերի թւով են. ամէն մի թելիս մի սատանայ կայ: Թռան նրանք երկնային եթերից և մըտան երկրի մառախլապատ մթնոլորտը: Եւ ես, գլուխս փաթթաթած վարսերիս մէջ, ուզեցի ննջել փոքր ինչ, յուսալով որ ժամանակ կունենամ հանգստանալու իմ երկար ուղևորութիւնից:

Աչքս հէնց նոր էր կպել, որ մէկ էլ տեսնեմ հրէսիկ մի աղմուկ բարձրացաւ: Զայրացայ սաստիկ. թէ այս ո՞վ է իմ քունը խանգարում: Աչքս բաց արի և ահա—Նորահրա՜շ երևոյթ, տեսի՛լ սքանչելի: Իմ Ճատիկ աբբանեակը, կոլոտ հասակով, չղջիկի թևերով, մարախի ոտներով, փոթորկի ուժով և Սողոմոնի հանճարով, սլանում գալիս էր երկու կրօնաւոր երկու թևի տակ առած: Խեղճերը ճըւճըւալով, բռռալով այնպէս հաբա՜յ էին տալիս, որ մարդի ջանը գարգանդում էր: Բայց քաջարի Ճատիկս իսկի ականջ չէր գնում ոչ նրանց գոռոց գոչումին, ոչ նրանց վերամբարձ ոտնահարութեանը, այլ աւելի պինդ հուպ էր տալիս նրանց և մխիթարում. «Մի՛ վախենաք, բաց չեմ թողնի. հրէս հասանք»:

Հասան: Բարկութիւնս ծիծաղի փոխուեցաւ, մանաւանդ երբ կրօնաւորների ողորմելի դէմքերը տեսայ:

—Պստիկ, էլ ուրիշ խաղ չկա՞ր. սրանց ո՞ւր ես բարձրացրել:

—Տէր Գիսաւոր, իմ արածը խաղ չէ, այլ բարեսրտութիւն: Ես որ չլինէի, սրանց բուրդը կըգզէին: Բայց լաւ է հէնց իրենց հարցնես:

Ես դարձայ նրանց, որ իմ առջև գլխիկոր կանգնած էին ապաշխարող Մխիթարեան կրօնաւորի նման: Մէկի կողքից կախ էր ընկած խորդալանի փոխարէն մի փոքրիկ լուսանկարչական գործիք, իսկ միւսը բերել էր հետը մի աման լուսի պէս սպիտակ մեղր:

—Դու ինչ ես արել, որ քո բուրդն ուզեցել են գզել,—հարցրի լուսանկարչին:

—Տէր Գիսաւոր, քո վարսերը միշտ մեր գլխին ծածանուին, և քո հովանին մեր գլխից միշտ անպակաս լինի: Ես յանցանք չեմ գործել: Այժմ մեր վանքում մօդ է լուսանկարչութեամբ պարապելը: Դա հօ՜ աղօթք անելուց աւելի արդիւնաւոր պարապմունք է և միանգամայն անմեղ ու զուարճալի: Ո՜հ, ո՜րքան մեծ բերկրանք է սրտի, երբ վայրկենաբար հանում ես դրացուդ պատկերը, երբ նա, օրինակ, ի՛բր ձեռով մեծացրած հաւերի ձուերն ու ճաբերն է համարում, կամ երբ դրացուդ բալկոնից ծուլութեան պատճառով հեղեղ է գալիս ներքև զանազան ձևերով և գոյներով, և դու այդ հեղեղի պատկերն ես առնում անցորդի գլխին տեղալիս... կամ թէ չէ ինչպէս գոյնզգոյն տեղաշորեր, եօրղան, դօշակ, շալիկ, շալկի ընկեր և ուրիշ անյայտ պաշտօնի շորեր, բոլորը հոլլանդական մաքրութեամբ, կախ են ընկնում պատշգամբից, յատկապէս տօն և կիրակի օրերը, երբ բարեպաշտ ժամաւորները բերանաբաց մտիկ են անում .. Կարելի է այս բոլորը տեսնել և չնկարել: Ասա խնդրեմ, տէր Գիսաւոր, մի վատութիւն կա՞յ սրա մէջ:

—Ոչ, ես-իմ գէսերը վկայ, ո՛չ:

—Բայց արի տես, որ ես սրանից աւելի անմեղ բանի համար եմ հալածւում: Ես մեր Երկրագնդի լրագրի մէջ առաջարկել էի մի շատ պարզ հանելուկ և ստանալ հինգ գրւանքա մեղր իմ այս եղբայրակցից: Այնպէս չէ՞, Յովհաննէս հայր սուրբ:

—Ճի՛շտ է, ճիշտ. հրէս մեղրն էլ հետս եմ առել:

—Բայց արի տես, որ մարդիկ ինչպէս էքսցենտրիկ մտածող են,—շարունակեց լուսանկարիչը.—Նախ քան խնդիրը լուծելն ուզում են առաջարկողիս գտնել, բայց ոչ այն պարզ ու բանաւոր պատճառով, որ չլինի թէ լուծելուց յետոյ, ես յետ քաշուեմ և իրենք զրկուին մեղրից: Նրանք առաջարկութեանս մէջ թշնամութիւն, յետին միտք են ուզում կարդալ, և դրա համար էլ աղմուկ են հանել: Բայց ես հաւատացնում եմ, տէր Գիսաւոր, որ ոչ ոքի դէմ թշնամութիւն չեմ զգենում. ինձ նման խաղաղասէր մարդ չկայ աշխարհում: Բոլորին էլ կըցանկայի երկու ձեռքով, երկու ոտով, ամբողջ գլխով թաղուած ծծէին ու լափէին վանքի բարիքները, նրա կաթը կթէին, նրա բուրդը խուզէին ու միսն ուտէին և հաւատա, տէր Գիսաւոր, ինձ որ մնար, ոչ թէ Աճառեանին սենեակներ կըտայի, հայր, մայր, քոյրեր պահելու համար. վանքի խոհանոցից, մառանից, շիրախանից ու պլանից ամէն կարիք կըհոգայի. այլ թէ միտք ունենար պսակուելու՝ հարսանիքը կանէի, թէ քոյր մարդու տար վանքի գիւղերից Եղուարդ կամ Մաստարա օժիտ կըտայի. թէև դրանով կալաչափերի հայր կըկտրուէր:

—Օ՜, այն ժամանակ ինչ հարսանիք կանէինք,—մէջ ընկաւ Ճատիկը.—եօթն օր, եօթն գիշեր. այնպէս չէ՞, հայր Օհաննէս:

—Չէ, չէ, տէր Գիսաւոր, դրանց մի լսի. դրանց որ մնայ, վանքը քար ու քանդ կըլինի:

—Ինչ որ մնար,—շարունակեց սառնասրտութեամբ լուսանկարիչն առանց ականջ դնելու միւսանց,—Աճառեաններին վանքից հեռանալուց յետոյ՝ ոչ միայն վանքի մառանից բոլոր ուտելեղէնն առատ առատ կուղարկէի (ինչպէս որ լինում է), այլ գիւղի տան վարձը կըտայի, կամ վանքի տներից մինը կընծայէի: Երեան կըգրէի, որ ուզած կտորները կըտրեն, ձեռներն ինչի դպչի, պարսից շահի նման, իրենցը լինի, իսկ հաշիւը վանքը տեսնի.... Ա՛յ այսպիսի առատաձեռնութեամբ կըբաշխէի վանքի բարիքը:

—Տօ, դու տնաքանդ, էդ ինչե՞ր ես ասում. քո՞նն ա՛, որ ուրիշին ես բաժանում,—մէջ պրծաւ զայրացած հ. Օհաննէսը.—վանքում այսքան տարուայ ո՞ր աշխատաւորն այն բաներն է վայելել, որ դրանք վայելում են. դեռ քիչ է հաշւում:

—Տէր Գիսաւոր, ես որ իրաւունք ունենայի,—շարունակեց առաջինը,—Սիրականին միայն վանքում բնակարան կըտայի և դրսի 20 րուբլի ամսական սնանկացնող ծախսերից կազատէի. ո՛չ միայն վանքի մատենադարանի ծառայ Արմենակին առաջը կըբանեցնէի, այլ ամէն բան վանքից կըմատակարարէի և մի հատ էլ համազգեստով ու սպիտակ ձեռնոցներով լակէյ առաջը կըդնէի. ո՛չ միայն պլանի ձիերը ձրի կըտայի զբօսանքի, այլ և վանքի կառքերն ամէն շաբաթ օր նրա տրամադրութեան տակ կըդնէի, որ Երևան գնալիս ի զուր ֆայտոն կամ տըրոյկա չնստի. ոչ միայն նրա թարգմանութիւնը կիսաքար տպել յանձն կառնէի, այլ ձրի: Ահա այսպէս կըյայտնէի իմ առատաձեռնութիւնս դէպի մեր մեծ վարժապետները, ցոյց տալու համար թէ մենք կծծի մարդիկ չենք, այլ ազգի լուսաւորութեան պաշտպաններ՝ անչափ

Մօտս գերեզմանատուն, — ծաղիկ-ծաղկունքով, ծառ ու կանաչով զարդարուած մի վայր, որ այս աշխարհից բաժանուածներին է յատկացուած: Եւրոպական ամեն գործի մէջ աչքի ընկնող օրինակելի կարգապահութիւնը միջոց տուեց մեզ մի րոպէում ցանկացած շիրմի մօտ լինել: Այդ շիրմի վրայ կանգնած էր մի գեղեցկատաշ, խաչաձեւ սեւ տապան—չգիտեմ ինչ միջոցով, ում նախաձեռնութիւնով կանգնեցրած—«Յովհաննէս Խաչումեան» մակագրութիւնով,—գերմաներէն եւ հայերէն. Նաեւ ծննդեան 29 փետր. 1869 եւ մահուան 16 մայիսի 1896 թիւերը: Հոգատար ձեռքով բուսցրած կանաչն ու ծաղկունքը գեղեցկութիւն էին տալիս շիրմին, իսկ նրա մօտ աճող մի մատաղ ծառ էլ հովանաւորում էր անխօս, մռայլ, սեւ տապանը: Ուրեմն անխնամ չէր հանգուցեալի շիրիմը. Նա ծածկուած էր մի գեղեցիկ տապանով, շրջապատուած ծառ ու ծաղկունքով: Երեւում է, որ գերեզմանատան վարչութիւնն անխնամ չէ թողնում ղարիբի գերեզմանը:

Արդէն այդով զգում էի, որ վերցուեց վրայիցս մի ծանրութիւն: Բայց դրա փոխարէն ճնշում էր ինձ ուրիշ ծանրութիւն:

«Նոր-Դար»-ի այն ընթերցողները, որոնք տարիներ առաջ էլ հետեւել են նրան, անշուշտ ճանաչում են Խաչումեանին, այժմ էլ հիացմունքով են յիշում Ամերիկայից գրած նրա կենդանի յօդուածները, այն երկրից, ուրտեղ նա ոյժ ու եռանդ չէր խնայում իւր ժողովրդի մասին ճիշտ գաղափար տարածել, հայ ազգի եւ եկեղեցու ազնիւ եւ եռանդոտ ջատագով էր հանդիսանում օտարների առաջ թէ մասնաւոր շրջաններում, թէ կազմակերպած ժողովներում ու կոնգրէսներում, եւ թէ նոյն իսկ գիւղական պարզ խրճիթում: Գերմանիայից նաեւ, դեռ ուսանողական նստարանի վրայ, իւր իմաստալից յօդուածներով ու թղթակցութիւններով գրաւում էր նա ընթերցողների ուշադրութիւնը: Յիշատակենք այստեղ «Դարավերջի նշաններ» վերնագրով նրա—կարծեմ վերջին—մի շարք ընդարձակ յօդուածները, հասարակական, գրական բովանդակութեամբ, որոնցով Խաչումեանի անունը պատուաւոր տեղ պիտի բռնէ մեր մամուլի պատմութեան մէջ:

Այն բազմաթիւ ցաւակցական հեռագրերն ու նամակները, որոնք երկար ժամանակ չէին վերջանում «Նոր Դար»-ում տպագրուելով, գեղեցիկ ապացոյց էին, թէ յարգանքի ո՛րպիսի խոր արմատներ էր ձգել Խաչումեանի անունն ընթերցողների մի ստուար բազմութեան մէջ: Սակայն մեզնում գիտեն միայն, դժբաղդաբար, լաւ թաղել կամ խոր ցաւակցութեան արտայայտութիւն տալ: Իսկ խօսքի յարգանքը գործ դարձնելու նշան բացակայում է: Խաչումեանի վերաբերութեամբ, օրինակ, մի՞թէ իսկական, ճշմարիտ յարգանքի արտայայտութիւն չէր լինիլ այն, որ առանձին գրքով հրատարակուէին նրա ա՛յն գրութիւնները, յօդուածները, որոնք մնայուն, չհնացող նշանակութիւն ունին,—օրինակ նրա «Դարավերջի նշաններ» ը: Ռուսական նոր սերունդն այսօր էլ կարդում է, ծանօթ է Շելգունովի նման հրապարակախօսի դեռ 60-ական թուականներին արտադրած հմուտ յօդուածները. եւ այդ ոչ թէ նրանով, որ նա թերթում, քրքրում է լրագրների կամ հանդէսների հին համարներ, այլ որովհետեւ հնարաւորութիւն է տրւում նրան ձեռք բերել Շելգունովի մնայուն նշանակութիւն ունեցող յօդուածների առանձին գրքով լոյս տեսած հրատարակութիւնը:

Սրանով չեմ ուզում Խաչումեանին Շելգունովի հետ համեմատել. սակայն չէ որ հայերս էլ մեր ունեցած քաղաքակրթութիւնով, մտաւոր անդաստանով ռուսների հետ չենք կարող համեմատուել:

Ար. Աբեղեան

Լայպցիգ, 14 մայիսի (ն. տ.)

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Նամակ խմբագրութեան)

Մենք հայերս շատ չափաւոր ազգ ենք: «Մեր գաւառական երիտասարդութիւնը որքան այժմ է գործում, կըրկնապատիկը, եռապատիկը կը գործի, եթէ մի քանի արտաքին եւ ներքին լուրջ արգելքներ չլինեն...» Եւ հէնց այդ պատճառով պլիւս մի նոր դափնի հայ երիտասարդութեան վաստակաւոր ճակատին: Այդ դափնին սիրով եւ յարգանքով մատուցանում է պ. Մ. Ցարութիւնեան ի պաշտպանութիւն մեր գաւառական երիտասարդութեան մեր դէմ գրած իւր ընդդիմախօսական յօդուածով («Նոր-Դար» №№59 եւ 60):

Բաւական է մի թոյլ յիշողութիւն անգամ, որ կարողանանք մտաբերել թէ տարիների ընթացքում մինչեւ մեր օրերը որքան շատ դժգոհութիւններ են յայտնուել թէ մամուլի մէջ եւ թէ հասարակական զանազան շրջաններում մեր երիտասարդութեան մասին. եւ անշուշտ միանգամայն արդարացի դժգոհութիւնները կը շարունակուեն, մինչեւ որ անհետանայ չարիքը... Ազգային աւանդութիւնների նուիրականութեան վրայ հիմնուած ժողովրդի առաջադիմութեան ամենագլխաւոր եւ ամենավտանգաւոր արգելառիթը հասարակաց կարծիքն է: Բայց միթէ հասարակաց կարծիք ասելու հետ եւ անհրաժեշտ է գլուխ ծռել, խոնարհուել նրա առաջ... Մենք գիտենք, որ աշխարհիս մէջ ամեն բան ունի իւր պատմութիւնը, այսինքն իւր անցեալը, ներկան եւ ապագան, եւ այդ բոլորը մի մի խրատական դասեր են մեզ համար:

Ինչպէ՞ս էին վարւում հինգերորդ դարի մեր գործիչները, որոնց անմոռանալի յիշատակի առաջ գլուխ ենք խոնարհում: Ի՞նչ էր անում այն ժամանակ Մ. Խորենացին, երբ այժմեան իմացական մարդու տեղ կար միայն մարդ-գազանը: Նա իւր ժամանակի այդ ինտելիգենտը, ժամանակակիցների առաջ պատկերացնում էր այն բոլոր ցաւերն ու մոլորութիւնները, որոնք անողոք միկրոբների պէս ուտում էին նրանց. ոչ աղքատութիւնը, ոչ հալածանքը, ոչ քաղցը ոչինչ չէր ազդում նրան յետ կենալու այն յամառ ճանապարհից, որով ընթանում էր նա. ինչու: Որովհետեւ այդ գծագրած ճանապարհը տանում էր նրան դէպի իւր իդէալը, որ արդէն կազմակերպուել էր, արիւն ու մարմին էր դարձել նրա մէջ... Իսկ XX-դ դարում «այդքան արգելքների դժուարութիւնների պիտի յաղթի մեր երիտասարդութիւնը, մինչեւ որ գլուխ բերէ մի ներկայացում...» բացականչում է պ. Ցարութիւնեանը (խօսքը բեմ դուրս եկող օրիորդների եւ տիկինների մասին է): Ակամայից յիշում եմ պարսկական առացուածքը. «արմո՛ւտ, արմո՛ւտ, տուշ ազգմա՛ սափ խուխարի»: Ըստ երեւոյթին, այդ ուղղութեամբ ենք ուզում առաջադիմել: Մենք դեռ մատնացոյց չենք անում այն իրողութիւնը, որ գաւառական շատ քաղաքներում, ինչպէս ցոյց են տալիս մեզ մեր լրագրների թղթակցութիւնները, միանգամայն համոզուած լինելով թատրոնական գործի նուիրականութեանը, իրենք օրիորդներր եւ տիկիններն են նախաձեռնող հանդիսանում: Գիտեմ, որ լրագրի սուղ էջերը թոյլ չեն տալիս թէ պ. Ցարութիւնեանի եւ թէ իմ յօդուածներից կտորներ բերելու. այդ յօդուածներն ընթերցող հասարակութեան առաջն են. թող նա ինքը դատէ, եւ խնդիրը պարզաբանէ: Սակայն չեմ կարող լռութեան տալ պ. Ցարութիւնեանի յօդուածի մէկ կէտը, որ ինձ վրայ ծանր տպաւորութիւն թողեց. Չը նայած այն հանգամանքին, որ պ. Ցարութիւնեանն ակներեւ պաշտպանում է մեզ, այնուամենայնիւ կտորներ բերելով մեր յօդուածից պ. յօդուածագիրն ասում է. «Զաքարեանի հակասութիւնն ակներեւ է, նա մի ձեռքով գրածը միւս ձեռքով ջնջում է...»: Ոչ թէ միմիայն յօդուածում «քիչ առաջ յայտնած հայեացքները քիչ յետոյ ինքս հերքում եմ», ինչպէս պնդում է պ. Ցարութիւնեան, այլ տասնեակ տարիներ առաջ գրածներս այսօրուանի հետ ներդաշնակ են: Գրողն իրաւունք ունի փոխելու իւր հայեացքներն այս կամ այն անձնաւորութեան, մամուլի այս կամ այն օրգանի վերաբերեալ, երբ նա տեսնում է ճշմարտութիւնը, արդարութիւնը յաղթահարուած. բայց իրաւունք չունի մեղանչելու ընդունուած կոնկրետ սկզբունքների դէմ:

Պօղ. Զաքարեան

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

Թիւրքեայի խնդրահոյզ, սերբիական կառավարութիւնը կարգադրել է խստիւ արգելել զէնքերի արտահանութիւնը Սերբիայից Մակեդոնիա:

— Թուրք սպաներին վաղուց արդէն արգելուած էր Կ. Պոլսում այցելել եւրոպական ճաշարաններն ու սրճարանները. սակայն, փոքր առ փոքր սկսել էին չպահպանել այդ արգելումն առաջուայ խստութեամբ: Այժմ թուրքաց զինուորական մինիստրութիւնը յիշեցրել է սպաներին, որ նրանք, արեւը մայր մտնելուց յետոյ, իրաւունք չունին այցելելու եւրոպական թաղի հաստատութիւնները. ոստիկանութեանը պատուիրուած է, որ խստիւ կատարուի այդ արգելումը:

ՍՊԱՆԻԱ

Այս օրերս լրացաւ Սպանիայի երիտասարդ թագաւոր Ալֆոնս XIII-ի 16 տարին, եւ նա, ինչպէս յայտնի է, հանդիսաւորապէս երդում տուեց պարլամենտում, որով եւ կառավարութեան ղեկն իւր ձեռքն առաւ: Հեռագրներից յայտնի է, որ պարլամենտ գնալիս թագաւորին ուզում էին սպանել: Ահա այդ դէպքի մի քանի մանրամասնութիւնները: Կէսօրից յետոյ մի ինչ որ մարդ մօտեցաւ թագաւորի կառքին եւ իւր գլխարկը նետեց բարձր: Դրան իսկոյն ձերբակալեցին, բայց մօտը ոչ մի զէնք չգտան, այլ միայն սիրահարական մի ոտանաւոր, որ նուիրուած էր ինֆանտա Մարիա-Թերեզային: Նրա անունն է Խոզէ Պուիչ: Նա բացատրեց, թէ ուզում էր խնդրել Մարիա Թերեզայի ձեռքը: Այս առթիւ ոստիկանութիւնն անիշխանականների դաւադրութեան հետքեր է գտել: Ձերբակալուած են բժշկական մի ուսանող, մի գրաշար, մի ատաղձագործ եւ մի որմնադիր. Նրանց մօտ գտնուած է 9 ռումբ: Ձերբակալուածներից մէկը խոստովանուել է, որ ռումբերից մէկը պիտի ձգուէր թագաւորի կառքի տակ նրան սպանելու միջոցին:

ՄԱՐՏԻՆԻԿԻ ԱՂԷՏԸ

Մի քանի հոգու աջողուել է փախչել Մարտինիկից Ս. Լիւցիայի կղզին, եւ նրանց պատմածների հիման վրայ «Հաւասի գործակալութիւնը» հեռագրում է հետեւեալ մանրամասնութիւնները.

Պըլէ լեռը մայիսի 3-ից սկսեց ծածկուել ծխի թանձր քուլաներով, իսկ գիշերն այդ լեռան վրայ երկինքը բոցավառուած էր, եւ այդ օրուանից սկսել էին լսուել սարսափելի խուլ թնդիւններ: Բնակչութիւնը խիստ վախեցած էր: Մայիսի 4-ին Պելէ հրաբխից դուրս ժայթքեց տաք մոխրի մի սաստկագոյն անձրեւ, որով ծածկուեց ամբողջ Սեն Պիէռ քաղաքը: Մայիսի 5 ին այրուող լաւան, թափուելով 4000 մետր բարձրութիւնից եւ ցած հոսելով լեռնային

յարգում ենք նոյն իսկ գիտնականութեան հաւակնութիւն ունեցողներին: Բայց արի տես, որ վանքում ամեն բան գլխիվայր է երեւում...

—Խօսքդ շաքարով եմ կտրում,—մէջ մտաւ ձատիկը,—շատ ճիշտ խօսք է: Մեզ սատանաներիս համար են ասում որ թարս են. էլ չեն ասում, որ վանքում ամեն բան թարս է, ոնց որ, հայր նկարիչ, քո մեքենայի ապակու վրայ: Հէնց որ մի պատկեր դուրս բերիր, գեղեցիկ թէ տգեղ, իսկոյն ամեն մարդ մատը ճակատին է դնում եւ հարց տալիս —ո՞վ կլինի նկարիչը: Տօ՛ խելքիդ պտուկը սիրեմ. փոխանակ գլուխ ջարդելու, նկարչին փնտռելու ձեր պատկերին նայեցէք. ուղի՞ղ է, սխա՞լ է. ապակին, կամ մեքենան, կամ նկարիչն ինչ մեղք ունի. հօ՛ ուղտին չի կարող նկարիչն արաբական նժոյգ դուրս բերել կամ ագռաւին սիրամարգ. ձեր պատկերն է, պրծաւ գնաց. մեղաւորը դուք էք, դուք. ո՞ւր էք գլուխ ջարդում թշնամութեամբ կամ նախանձով, կամ մի որ եւ է հաշուով ձեր թերութիւնը ծածկել ձգտում խօսակցի առաջ: Սրան ինչ կասես, հայր Օհաննէս:

—Է՜հ, ձատիկ ջան, էն վաղ էր, որ էշը կաղ էր. այդ բաներն ո՞վ է հարցնում: Դու նրա էշին չոչ ես ասել. պըրծաւ: Նրա խելքի վէճը չէ, որ նրա էշը մտել է քո այգին ու խաղողիդ մատները կ'ծոտել: Արիւնն աչքը կոխած, խամից նոր ելած գոմշի պէս փնչալով ու ոռնքալով պոզերը դէմ են անում առաջին իւր դէմը ելածին ու քեալլա տալիս:

—Եւ ինչ արտառոց մեղադրանքներ չեն մէջ բերում,—շարունակեց սառնութեամբ լուսանկարիչը:—Աճառեանն ասում է. «Ես տարիներով միաբանութեան մէջ ապրեմ. ազգականներ բերեմ վանական կրօնաւորների մէջ, կողք կողքի նստեմ. եթէ հ. Հմայեակն գրօսնելիս պատահմամբ, դէհ աչք է էլի, լուսամտից ներս նայի, ահագին սկանդալ սարքեմ»:

—Վա՛հ. էդ ինչ սկանդալ է,—ականջները սրելով հարցրեց ձատիկը...

—Էդ մասին յետոյ,—ասաց լուսանկարիչը եւ շարունակեց.—դուրս գալուց յետոյ էլ չնայելով իւր 50 եւ իւր հօրը 20 րուբլի վանքից ամսական ստանալուն, կերակրի բոլոր մթերքները վանքից ձրի ստանալ եւ դու նրա պատկերը մի հանիլ. դա տգեղ երեւոյթ է. այլ սուս, որ քըռտիր ձեռներդ եւ կթիր որքան կարող ես... Սիրականն էլ ասում է. «Քանի որ Աճառեանն ամբողջ ընտանիքով ապրել է վանքում. քանի որ այդ բնակարանը հիմնուած օրից աշխարհականի ապաստանարան է եղել. քանի որ Վաղարշապատում նման սենեակների համար ամենաքիչը 25—30 րուբլի ամսական վարձ պիտի տալ. քանի որ վանքում ձրի է տրւում. քանի որ խնայողութիւնն առաքինութիւն է. ուրեմն «հետեւաբար եւ բնականաբար» այդ բնակարանն ինձ կըհասնի: Մանաւանդ որ ես ուրիշի նման անյայտ անկիւնից լոյս չեմ ընկել, ոչ էլ առ այժմ շատ պահանջներ ունեմ»:

—Կարծեմ, իրաւաբանի այսպիսի՛ զօրեղ փաստաբանութեան առաջ պէտք է խոնարհել,—նկատեց ձատիկը:

—Տէր Դիտաւոր, ընձանից պ. Գալուստն էլ է՛ նեղացել, որ նրա հօքիրին թէ մօքիրին նկարել եմ: Մի անվնաս տիկին էր. Զինգերի մաշինան բալկոնում դրած ներդաշնակ չխչխկոցով կար էր անում, թէեւ դրանով վարդապետների ճաշուայ քունը խանգարում էր: Բայց որքան լուսաւորւում էր մարդու միտքը մեքենայի քաղցր չխչխկոցի տակ. հին ձեռագրներ հասկանալ, կամ Սաթենիկ թագուհու «տենչանքը» մեկնել. կամ երբ ազգականուհու բարեկամութեամբ Վաղարշապատից տիկին կամ օրիորդներ այցելութեան են գալիս եւ բալկոնում նստած զրոյցներ անում աստղաբաշխական, գիտական, քննադատական կամ մատենագրական: Ահա այդ անմեղ բաներն ու րոպէները նկարել ենք: Հօ՛ դրանով պայթակցութիւնը չծառացաւ. ով համակրում չի, աչքերը փակի կամ բալկոն չնայի:

—Միւս կողմից չորրորդն է գլուխը ցցում. Խաչիկ էֆէնդին. Ախպա՛ր, ա՛ս ինչ ըրեր ես. մէյ մը ինձի նայեցէք: Ան ի զուր դեղեր, ապակիներ կըփճացնէ կոր. լուսանկարիչներուն ամենէն գէշն է: Ի՞նչ էինք ըրեր. վանքին հացը կուտէինք. Ղազարապատ մեր տեղը կընստէինք. հիչ մէկուն բան մը չէինք ըներ կամ ըսեր: Ելաւ մեր նկարը քաշեց, պայուսակը ձեռքս. գլխարկս գլխիս իբր թէ վանքին կառավարութիւնը գացեր եմ, հոն կանգներ: Ճիշտ է, գացեր եմ. սակայն առանց պայուսակի. գլխարկս ալ ձեռքիս, մասր վկայ կառավարութեան անդամները: Ալ դեռ հիչ. Զիս կընկալէ իբր թէ ագահաբար վանքին սեղանատունը ամառ ամանի վրայ կըգտարկեմ. ալ ինչ է. մարդ հայ չո՞ւ տեր մի. ալ նկարե լո՛ւ բան է: Ես պուրտարոյծ մ'էի կամ հէրկէլ: Նստարով պայմանս ալ նկարեց, ինչպէս գայն բանի կըխլեմ կառավարութեան անդամներուն ձեռքէն: Անոնք չեն ուզեր տալ, ես կըվազեմ հրաման բերելու: Ուզեց հասկցնել թէ վանքէն շատ կառնեմ, ոչինչ չեմ տար. վանքը կըշահագործեմ կոր: Հաչիւ մ'ալ նկարեր էր. զիս պատկերացուցեր էր մի քսակ կոպէկներով ձախ ձեռքս, որ կըժեխնիմ վանական կառավարութիւն, իսկ աջ ձեռքով համարեա ոսկիով լի ծրար կըյափշտակեմ ու գրպանս կըլեցնեմ կոր: Էհ ինչ ընենք. աշխարհ դմակ է, մարդը դանակ: Մանաւանդ որ ես աս տարի լակլակներու հետ հեռացել եմ ու լակլակներու հետ ալ դարձեր: Եթէ յատուկ գթութիւն չըլլար. զիս ոչ միայն վանքի համեղաճաշակ խորտիկներէն, այլ շատ մը շահերէ կըզրկէին: Գթութիւն, յատուկ գթութիւն զիս փրկեց եւ նոյն իսկ պայմանիս 80 րուբլին ալ խնայեց:

Ահա այս եւ այսպիսի բաների համար վրդովուել են նկարների տէրերը եւ նըրանց հանգիստը խանգարուել: Շատ շնորհակալ եմ ձեր բարեխօսութեան, ձատիկ, որ իսկ ժամանակին վրայ հասաւ եւ մեզ ազատեց փորձանքից. թէեւ այս ճանապարհորդութիւնն էլ պակաս զարհուրելի չէր բայց մարդ աւելի ապահով է սատանի թեւի տակ, քան արդարութեան ու իրաւունքի ձայնը կրծքում խեղդած մարդ կոչուած արարածի առաջ:

Լռեց:

Լուռ էր եւ Յովհաննէս հայր-սուրբը եւ ձատիկը:

Ես, Դիտաւորս, մտածեցի, մտածեցի եւ վերջապէս ելքը գտայ:

—Դու, բարեխիղճ ձատիկ, ապրես, որ դրանց ինձ մօտ բերիր. բաւական նկարներ տեսանք էջմիածնի բնակիչներից. վանքն անչափ փոխուել է: Դու այժմ դրանց յետ տար երկիր. միայն զգոյշ. բաց չթողնես օդի մէջ: Երբ վանք հասնես, կըմտնես մէկ մէկ վրդովուածների խցերը եւ խորհուրդ կըտաս, որ իրենց տեղերը հանգիստ մնան: Ես քննեցի մեքենան, դեղերը, ապակիները, ո՛չ մէկն էլ պակասութիւն չունին:

Եթէ տարօրինակ, այլանդակ կամ ծաղրելի պատկեր են ստանում, մեղաւորն իրենց դէմքն է եւ հոգին: Թող ձգտեն դէմքի եւ հոգու գեղեցկութիւն ձեռք բերել. այն ժամանակ եւ գեղեցիկ նկարներ կը քաշէ մեր լուսանկարիչ հայր սուրբը:

Իսկ դու, Յովհաննէս հայր սուրբ, մեղրը պատրաստի կըպահես, չուտես, հէնց որ հասնելուկը լուծեցին, խոստացած մրցանակդ անտրտունջ մէջ կը բերես:

Դիտաւոր

գետի ցամաքած տաշտի միջով, երեք քայլէում անցաւ այն հինգ մղոն տարածութիւնը, որով բաժանուած է լեռը ծովափից. այդ լաւան կործանեց և սրբեց իւր ճանապարհին գտնուած տնկարանները, շէնքերը, գործարանները՝ հեղեղը ոչնչացրեց Գերէնի մեծ գործարանը իւր 150 բանուորներով: Հրաշէկ լաւան ահագին հեղեղի պէս թափուեց ծովը, և մի հսկայական ալիք 300 ֆուտ բարձրութեամբ դուրս շպրտուեց ծովից դէպի ափը, իւր հերթին աւերածութիւններ տարածելով. Սեն-Պիէռի բնակիչները սարսափահար փախչում էին դէպի ծովը։

35 հոգի կին և երեխայ մայիսի 6-ին հասան Կաստրիս նաւահանգիստը: Տղամարդիկ մնացել էին Մարտինիկում: Հեռագիրը դադարել էր գործելուց Ս. Վինսենտեան կղզու և Մարտինիկի միջև մայիսի 6 ից սկսած: Վերջապէս, մայիսի 8-ին, կէսօրից յետոյ, Կաստրիս նաւահանգիստը մտաւ դանդաղօրէն մի շոգենաւ կամ, աւելի ճիշտը, շոգենաւի մի կմախք, մոխրով ծածկուած. դա «Roddam» շոգենաւն էր: Նաւապետը պատմեց, թէ գիշերը սարսափելի ալեկոծութեան ենթարկուելուց յետոյ, առաւօտեան ժամը 8-ին մօտ խարիսխ էր ձգել Սեն-Պիէռի նաւամատոյցում: Եղանակը հիանալի էր։ Նաւապետը խօսում էր մի մարդու հետ, երբ յանկարծ քաղաքի վրայ իջաւ մի ահագին թանձր ծուխ, որի միջից կայծեր էին թափում, և «Roddam»-ի վրայ սկսեց թափուել կրակի անձրև: Աներևակայելի ջանքերով շտապեցին կտրել խարիսխի շղթան, և «Roddam»-ն շտապով հեռացաւ դէպի Կաստրիէս նաւահանգիստը, ուր և հասաւ 9 ժամ յետոյ: Շոգենաւի նաւաստիներից 12 հոգի մեռան ստացած սաստիկ այրուածքներից, երկուսն էլ մեռան Կաստրիէս հասնելուց յետոյ։ Կրակի անձրևը հետամուտ էր լինում «Roddam»-ին վեց մղոն տարածութեան վրայ։ Նաւապետը նոյնպէս խիստ ծանր այրուածքներ է ստացել։

Ցորդ վախենում են մտնել Սեն-Պիէռին: Հեռուից կարելի է նկատել միայն փողոցները, դիակներով ծածկուած, և տները, որոնք շարունակում են այրուել: Քաղաքի բնակիչներից ազատուել են միայն նրանք, որոնք հեռացել են աղէտի նախորդ օրը կամ լաւայի ժայթքման օրը մինչև առաւօտեան ժամը 8-ը։

Սենատոր Կնայտ, որը հասել է Պորտ դը Ֆրանս Սեն-Պիէռի շրջականներից փախած 800 բնակիչների հետ, հեռագրում է. «Պելէ հրաբուխը դեռ ևս արտավիժում է հրաշէկ լաւա. Ինձ աջողուեց այրել 400 դիակ Սեն-Պիէռում, իսկ այնուհետև անկարելի եղաւ աշխատանքը շարունակել առանց մահուան վտանգի ենթարկուելու։ Դժուար է կանխատեսել, թէ իսկապէս երբ կարելի կը լինի հետազօտել Սեն-Պիէռի աւերակները»։

Ֆրանսական հասարակապետութեան նախագահը իւր անձնական գումարներից նուիրել է 20 հազար ֆրանկ Մարտինիկի աղէտից վնասուածների օգտին։ Ֆրանսական մինիստրները նոյն նպատակով նուիրել են 5 հազար ֆրանկ: Պարիզում դրամական նուիրատուութիւններ են ստացած եւրոպական շատ պետերից:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 8-ին Կրասնօյէ Սելօյի դաշտում զօրահանդէս եղաւ Նոցին Կայսերական Մեծութիւնների և Նախագահ Լուբէի ներկայութեամբ։ Զօրահանդէսից յետոյ Կայսերական ճաշարան-վրանի մէջ տեղի ունեցաւ նախաճաշ, որի ժամանակ Թագաւոր Կայսրն արտասանեց հետևեալ բաժակաճառը.

„Monsieur le président, Mes troupes, dont vous venez voir le défilé, sont heureuses d'avoir pu rendre les honneurs au chef hautement estimé de l'état ami et allié. Les vives sympathies, qui animent l'armée russe à l'egard de la belle armée française, vous sont connues; elles constituent une reelle fraternité d'armes, que nous pouvons constater avec d'autant plus de satisfaction, que cette force imposante n'est point destiné à appuyer des visées agressives, mais bien et à sauvegarder le respect des principes élevés, qui assurent le bien être et favorisent le progrès des nations. Je lève Mon verre à la prosperité et à la gloire de la brave armée française“. Նորին Մեծութեան բաժակաճառին ֆրանս. հասարակապետութեան նախագահը պատասխանեց հետևեալ բաժակաճառով. „Sire, je remercie Votre Majesté de m'avoir procuré le très vif plaisir d'admirer ces belles troupes, dont la fière contenance, la demarche marciale, les mouvements precis attestent, que l'armée russe par l'incessants progrès soutient vaillament sa haute renommée; de même que les cympathies communes et des intérêts superieures ont uni les deux peuples, de même la noble fraternité des armées et une estime reciproque lient étroitement les deux armées. Cette force imporante n'est une menace pour personne, mais il est permis à la Russie et à la France d'avoir, en même temps qu'une garantie pour l'exercice le leurs droits, un abri sous lequel elles peuvent en toute tranquilité poursuivre le labeur fecond, qui, les rendant plus prospères, augmentera leur puissance et leur légitime influence. Au nom de l'armée française, qui n'a pas oublié l'honneur, que lui a fait Votre Majesté en assistant à ses manoeuvres, je bois à la prosperité et à la gloire de la brave armée russe“.

Մայիսի 8-ի երեկոյեան Պետերբուրգում «Մեդվեդ» ճաշարանի դահլիճում տեղի ունեցաւ ռուսաց մամուլի ռաուտ-բանկետը ֆրանսական լրագրողների պատուին։ Հրաւիրուած էր 400 հոգուց աւելի: Խօսուեցին մի շարք բաժակաճառեր։ Հանդէսը վերջացաւ առաւօտեան ժամը 5-ից յետոյ։

—«Վիլենսկի Վեստ.»-ի մէջ տպուած է Թագաւոր Կայսրի ֆոն Վալին ուղղած հետևեալ հեռագիրը. «Ընդունեցէք Իմ անկեղծ ուրախութեան արտայայտութիւնը ձեր ազատման առթիւ և սրտագին բարեմաղթութիւններս, որ շուտով և կատարելապէս առողջանաք»:

—Պրետորիայից հեռագրում են մայիսի 9-ից, որ կիրակի օրն այնտեղ են հասել ֆերէյնիգունգի ժողովի կողմից ընտրուած վեց պատգամաւոր, Դեետը և Դելարէյը ութ քարտուղարի հետ. Նրանք ապրում են Կիտչեների տան կից բնակարանում: Միլները Պրետորիա է հասել մայիսի 8-ին:—Տրանսվաալի բոէրների մեծամասնութիւնը տրամադիր է հաշտութիւն կայացնելու, իսկ Օրանժի բոէրներն, ընդհակառակը, յանկանում են, որ հաշտութեան բնակցութիւնների հիմքը լինի անկախութիւնը:

—Պորտ-դը-Ֆրանսից հեռագրում են մայիսի 9-ից, որ ծովի մակընթացութիւնը ոչնչացրել է Կարբէ նաւահանգստի մի մասը, կղզու հիւսիսային մասի բնակչութիւնը խիստ երկիւղի մէջ է և հեռանում է Պորտ-դը Ֆրանսից, դիմելով դէպի Գվադելուպա և հարաւային կողմերը։

—Նոյն տեղից հեռագրում են. «Մայիսի 20 ին (ն. տ.) առաւօտեան հրաբխի նոր ժայթքումները սարսափելի իրարանցում ձգեցին. հազարաւոր մարդիկ փախան այստեղից. ծովը լաւայի խիստ հոսանքի ազդեցութիւնից տեղ-տեղ եռում էր. Կարբէ գիւղի վրայ քարի թանձր անձրև էր տեղում:

—Ֆրանսական «Temps», «Journal des Débats» և ուրիշ թերթեր տպել են պաշտօնական հաղորդագրութիւն Վալդեկ-Ռուսսօյի մինիստրութեան հրաժարականի մասին։ Հաւանական են համարում, որ նոր մինիստրութիւնը կազմուի Լէօն Բուրժուայի գլխաւորութեամբ:

— Հաւաննայից հեռագրում են մայիսի 8-ից, որ ամերիկեան զինուորական նահանգապետ Վուդը կառավարչութիւնը յանձնել է Կուբայի հասարակապետութեան նախագահին և ամերիկեան զօրքերի հետ հեռացել է կղզուց:

ԹԵՐ ԵՒ ԴԷՄ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի խմբագիր.

Հոգաբարձութիւնս «Նոր-Դար»-ի № 40-ում Գ...եան ստորագրութեամբ Թաւրիզից գրուած նամակը կարդալով ճշմարտութիւնը յայտնի կացուցանելու համար անհրաժեշտ համարեց խնդրել խմբագրութեանդ «Նոր-Դար»-ի համարներից մէկում զետեղելու հետևեալը:

Պ. Գ...եան ասում է. «Հոգաբարձութեան երեք անդամները հրաժարուել են նախագահի և ուսումնարանի տեսչի զանազան ոտնձգութիւններին չկարողանալով հանդուրժել»: Նախ հարց է, թէ արդեօք գոյութիւն ունեցել է մի այդպիսի ոտնձգութիւն. եթէ այո, ինչո՞ւ թղթակիցը փաստեր չի ներկայացնում իւր ասածը հաստատելու համար. մինչդեռ իրողութիւնը սրա հակառակն է ցոյց տալիս. այս մասին վկայ են հոգաբարձութեանս արձանագրութիւնները: Երկրորդ՝ երեք անդամներն իրենց հրաժարման պատճառները ներկայացրած են առաջնորդին, որը, քննութիւն կատարելով, անճիշտ և անհիմն լինելն ստուգած է. այս մասին Գ..եան կարող է կարդալ առաջնորդարանի գործերը: Մենք խնայելով հրաժարուող մեր ընկերների պատիւն, այդ քննութեան արդիւնքը մէջ չենք բերում:

Գ...եան ասում է. «Առաջնորդը չի ընդունել նրանց ներկայացրած հրաժարականը»: Այս սխալին փաստ կարող է ծառայել առաջնորդի № 1 և 17 յունուարի 1902թ. պաշտօնական հետևեալ նամակը. «Որովհետև հրաժարուած հոգաբարձուները չկամեցան յետ առնել իրենց հրաժարականները, ուստի առաջարկում եմ մեծապատիւ հոգաբարձութեանդ՝ ընտրել գանձապահ և ստանալով պ. Բաղդասար Ջանեանցից բոլոր հաշիւները, յանձնել նրան ձեզ հաւատացած դպրոցներն անսայթաք առաջ տանելու համար»:

Գ...եան ասում է. «Առաջնորդը խօստացել է, որ սրանից յետոյ Լիլաւայի ուսումնարանի հոգաբարձական բոլոր նիստերն իւր ներկայութեամբ կը լինեն. ..., և հոգաբարձութեան նախագահն սկսում է տաքանալ, յայտարարում է, թէ չեն ընդունիլ ժողովներում առաջնորդի ներկայութիւնը...»: Նախ՝ առաջնորդի կողմից հոգաբարձութեանս մի այդպիսի յայտարարութիւն չէ եղած, ոչ գրաւոր և ոչ էլ բերանացի, և նախագահի կողմից մի այդպիսի պատասխան չէ տրուած։ Իրողութիւնը հետևեալն է։ Հոգաբարձութեանս նախագահը միևնոյն ժամանակ անդամ է Ատրպատականի ազգային գործերի համար մի վարչական կանոնագիր խմբագրող մասնաժողովի, այդ վարչական կանոնագիրն առաջնորդարանում առաջնորդի ներկայութեամբ խմբագրելիս, խնդիր է եղած հոգաբարձական ժողովներին առաջնորդի կամ նրա փոխանորդի նախագահելու իրաւասութեան մասին. Հոգաբարձութեանս նախագահը ոչ թէ իբրև հոգաբարձու, այլ իբրև անդամ այդ մասնաժողովին այդ մտքի հետ համաձայն չէ եղել և ազատօրէն յայտնել է իւր կարծիքը։ Ահա այս իրողութիւնն է, որ Գ...եան հոգաբարձութեանս հետ է կապում:

Գ...եան ասում է. «Նախագահն անմիջապէս ժողով է հրաւիրում իւր արբանեակներին և հոգաբարձութեան մի նոր գանձապահ ընտրել տալիս»։ Նամակագիր պարոնը դրանով անհեթեթ միտք է յայտնում. Մի այդպիսի դէպքում, հասարակական մի որ և է հիմնարկութեան պատասխանատու մարմինն արդեօք ուրիշ կերպ կը վարուէր, հրաժարուող գանձապահի տեղ մի նորը չէր ընտրիլ, գործերը և հաշիւները երեսի վրայ չթողնելու համար: Մանաւանդ, որ գանձապահ ընտրելու մասին առաջնորդը վերև յիշուած № 1 և 17 յունուար 1902 թ. նամակով արտօնութիւն տուել է:

Գ...եան ասում է. «Դպրոցի գումարները տրւում են բացառապէս հայերէն գրուած մուրհակներ ստանալով: Եւ այս գործի խճճումն սկիզբ կառնէ այն հանգամանքից, որ Պարսկաստանում բացառապէս ընդունելի են համարւում միմիայն մոլլայի ձեռքով գրուած պարսկերէն մուրհակները»։ Հոգաբարձութիւնս, նախորդ հոգաբարձութիւնից դպրոցական հաշիւներն ստացած ժամանակ, միմիայն բացառապէս հայերէն գրուած և առանց գրաւականի մուրհակներ է գտած, և համաձայն առաջնորդի №51 պաշտօնագրի կարգադրութեան, ձեռնարկած է նախ 9% տոկոսով դպրոցական փողերը գանձել և տալ 12% տոկոսով այն անձանց, որոնք կը ներկայացնեն գրաւականներ և յաջորդաբար բոլոր փողերը գանձել և տալ գրաւական ներկայացնողներին։ Եւ այսպէս էլ վարուել է. առանց խտիր դնելու հոգաբարձութեան անդամների և ժողովրդի միջև, միշտ պահանջել և ստացել է գրաւականներ: Մի շատ թարմ փաստ ևս։ Դեռ այսօր կեարգիւզարութեան մէջ բանտարկուած են երեք երիտասարդ հայ վաճառականներ, որոնք փոխադարձ երաշխաւորութեամբ բացառապէս հայերէն գրուած մի մուրհակով երկու մարաղացի հայերի 300 թուման պարտական են և չեն կարողացել վճարել: Այս դէպքը ցոյց է տալիս թղթակցի պարոնի այն խօսքերի անհեթեթութիւնը, որ ասում է. «Պարսկաստանում բացառապէս ընդունելի են համարւում միմիայն մոլլայի ձեռքով գրուած պարսկերէն մուրհակները» եթէ այս ճշմարտութիւն է, ապա ուրեմն ինչո՞ւ համար և ինչ հիման վրայ հայերէն գրուած մի մուրհակի պատճառով կեարգիւզարը երեք հայերին բանտարկել է տալիս և փողը պահանջում:

Գ...եան ասում է. «Արդ՝ այս ամենը յայտնելով, մենք մեր պարտականութիւնն ենք համարում սոյն խնդիրը յանձնելու թեմիս առաջնորդի և Լիլաւայի հայ հասարակութեան խորին ուշադրութեանը, և այլն»։ Առաջնորդը տեղեակ է հոգաբարձութեանս կարգադրութիւններին և իւր ձեռքով է վաւերացնում ու հաստատում մուրհակները, որոնց տպագրուած մի օրինակը յղում ենք խմբագրութեանդ *):

Վերջացնելով մեր այս պաշտօնական հերքումը, պարտք ենք համարում աւելացնելու 1) որ Լիլաւայում առաջնորդի դէմ ինտրիգներ լարելու ոչ մի դիտաւորութիւն չէ եղել. ուղղամիտ և ազնիւ մարդը կարող է առանց ինտրիգների ցոյց տալ իւր գաղափարի հակասութիւնը և ազնիւ միջոցներով կռիւ մղել. 2) որ հոգաբարձութեանս գործունէութիւնը և հաշիւները հասարակութեան առաջ միշտ բաց են, քննադատելու ցանկութիւն ունեցողները կարող են միշտ դիմել և քննել։

Մնամք յարգանօք՝
Լիլաւայի «Հայկազեան և Թամարեան» երկսեռ դպրոցների հոգաբարձութեան
Նախագահ՝ դոկտ. Կ. Ց. Փաշայեան
Գանձապահ Մատ. Ցովսէփեան
Քարտուղար՝ Արշակ Ղորղանեան
Անդամ-երէցփոխ՝ Ա. Ցարութիւնեան
Թաւրիզ:

---

*) Ստացել ենք մուրհակի այդ օրինակը: Խմբ.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Кёлерская
Хинная Вода
ДЛЯ УНИЧТОЖЕНІЯ ПЕРХОТИ И ДЛЯ УКРѢПЛЕНІЯ ВОЛОСЪ.
Не слѣдуетъ судить о дѣйствіи этой хинной воды по опытамъ съ другими издѣліями подъ тѣмъ-же, или похожими названіями.
ПРОДАЖА ВЕЗДѢ ВЪ ЛУЧШИХЪ МАГАЗИНАХЪ.
Старшая дама: „Ужъ если это Кёлерская, несомнѣнно надо попробовать.“
(М.) № 13 2—1

„ЖИДКІЙ ЛЕДЪ“
ДЛЯ ГОЛОВЫ.
Новѣйшее изобрѣтеніе на фаб. Т-ва
Р. КЁЛЕРЪ и К° въ МОСКВѢ.
Смачиваніе этимъ средствомъ головы моментально производитъ самое благодѣтельное и интенсивное освѣженіе въ пору лѣтнихъ жаровъ, при головныхъ боляхъ, приступахъ дурноты, тяжести головы и отъ всякихъ излишествъ и пр., совершенно на подобіе настоящаго льда.
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ,
но рекомендуется остерегаться поддѣлокъ.
Н. НИКОЛЬСКІЙ
(М) №6 2—1

МЫЛО БѢЛАЯ СИРЕНЬ
МЫЛО ВІОЛА ВІОЛЕТТА
МЫЛО РОЗА РОЗИТА
№ 4711
МЫЛО ОРИВІОЛА
МЫЛО „LA BARONESSE“
МЫЛО „LILY OF THE VALLEY“
ПРІОБРѢЛИ БЛАГОДАРЯ СВОЕМУ ВЫДАЮЩЕМУСЯ КАЧЕСТВУ И ЧУДНОМУ ЗАПАХУ БОЛЬШУЮ ПОПУЛЯРНОСТЬ СРЕДИ ПУБЛИКИ.
(М.) №128427/27 10—10

Լոյս տեսաւ

ԻՈՒՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ

„Армянскій поэтъ

Смбатъ Шахъ-Азизъ"

(Քննադատական էտիւդ)

Գինն է 1 ր.

Գրքոյկին կցած են՝ Սմբատ Շահ-Ազիզի լուսատիպ պատկերը, «Լևոնի Վշտի» մի շարք կտորների և այլ ոտանաւորների ռուսերէն թարգմանութիւնը։ Ցանկացողները դիմում են հեղինակին հետեւեալ հասցէով՝ Москва, Леонтьевскій пер., № 11, кв. 17, Юрію (Георгію) Алексѣевичу Веселовскому. (0) 5—2

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ !

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՈՍՆԴԲՈՐԻՆ ԾՈԾՐԻՆԻ

ՕՃԱՌ

ԴԵՂԱԳՈՐԾ

Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ

Ոչնչացնում է մաները, արեւից այրուածքը, դեղին բծերը լունգները, բշտիկները և այդում է աւելորդ քրտնելու դէմ առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ։

Մի կտորի գինը 50 կ., ½ կտորին 30 կ. Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում.

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկուայում։
(М.) № 192764 24—24



(М) № 128415/26 12—8

№ 4711
Captol
„КАПТОЛЬ"
ЛУЧШАЯ ВОДА ДЛЯ
ВОЛОСЪ,
ДЛЯ ОЧИЩЕНІЯ, ОСВѢЖЕНІЯ,
УКРѢПЛЕНІЯ ГОЛОВНОЙ КОЖИ,
ОЖИВЛЕНІЯ НЕРВОВЪ.
ОСОБЕННО ПРОТИВЪ ГОЛОВНОЙ
ПЕРХОТИ И СОПРЯЖЕННОЙ СЪ НЕЮ
ЧЕСОТЫ И ВЫПАДЕНІЯ ВОЛОСЪ.
ПРИГОТОВЛЕНА ПО УКАЗ.
Д-РА МЕД. I. ЭЙХГОФФЪ ВЪ ЭЛЬБЕРФЕЛЬДѢ
„КАПТОЛЬ" НЕ СОСТАВЛЯЕТЪ СЕКРЕТНАГО СРЕДСТВА.
ЕДИНСТВЕННЫЙ ФАБРИКАНТЪ
ФЕРД. МЮЛЬГЕНСЪ КЕЛЬНЪ НА РЕЙНѢ.
ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА.

М.) №173252 18 13

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պ. պ. փայատէրերին հրաւիրում է վերստին

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը լինելու է շաբաթ, մայիսի 11-ին, երեկոյեան ժամը 6-ին վարչութեան շէնքի մէջ, Երևանեան հրապարակ տուն Խարազեանի՝ ի տեղի ապրիլի 28-ին տեղի չունեցած ժողովի։

Պարապմունքի առարկաներն են.

1) Քննել և հաստատել անցած 1901 թ. հաշիւը և բալանսը:

2) Ծախքերի նախահաշիւը և այս տարուայ գործունէութեան ծրագիրը:

3) Ընտրել վերստուգող յանձնաժողովի անդամներ։

4) Ներկայ ընկերութիւնից վերակազմուելիք Թիֆլիսի ակցիօներական առետրական նաւթարդիւնաբերական ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը։

Ըստ սմին վարչութիւնը յիշեցնում է՝ 1) որ հաւատարմաթղթերը պէտք է ներկայացնել վարչութեանը ոչ ուշ քան ժողովից երեք օր առաջ, համաձայն ընկերութեան պայմանագրի 24-րդ կէտի, 2) որ նախնական անդորրագրերը մի տիրոջից միւսին յանձնուելը պիտի կատարուի ըստ ամենայնի ընկերական պայմանագրի 8-րդ կէտի համաձայն:

Ապրիլի 23-ից սկսած տպուած հաշիւն ու բալանսը, նմանապէս և ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը կըտրուեն պ. պ. փայատէրերին վարչութեան գրասենեակում առ. ժամը 10-ից մինչև օրուայ ժամը 3-ը:

Ապրիլի 28-ի համար տրուած հաւատարմաթղթերը պէտք է նորերի վերածել մայիս 11 թւում։ (928) 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՆՈՐ ԳԻՐՔ

ՆԱՐ-ԴՈՍ

ՍՊԱՆՈՒԱԾ ԱՂԱՒՆԻՆ

ՎԻՊԱԿ

Գինն է 30 կոպէկ

Դիմել՝ Баку, книжная торговля Буніатова, կամ Тифлисъ, ред. „Норъ-Даръ".

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ

(INJECTION AU MATICO)

Դրիմօ և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում։ Հեղուկի մէջ շահագործուած են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյից (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։

(М)200345 43—27

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութիւնը յայտնում է, որ սոյն մայիսի 15-ին երեկոյեան 8 ժամին հոգաբարձական ժողովում նշանակած է **ԱՃՈՒՐԴ** մսմատակարարութեան։ Պայմանները կարելի է կարդալ հոգաբարձական դիւանատանն ամեն նայն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկուայ ժամը 10—1։
(927) 3—3

ԿԱՊՍԻԻԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՅԻ

[Capsules au Matico]

ԴՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Թոյլ է տրուած Ռուսիայում։



Աջողութեամբ գործ է ածւում հոնորէյի բժշկութեան ժամանակ, երբեք չյոգնեց նելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածւում Կոպայբալզամը հեղուկ ձեւով։

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։

(М.) № 204995 24-6

Открыта подписка на 1902 г.

(V годъ изданія)

на еженедѣльную газету, посвященную Востоку, Кавказу и другимъ окраинамъ

„РОССІЯ и АЗІЯ".

Съ приложеніемъ «Альманаха Россіи и Азіи», заключающаго въ себѣ по желанію подписчиковъ или

„ИСТОРІЮ ЕВРЕЕВЪ ГРЕТЦА"

ВЪ 8 ТОМАХЪ.

СОДЕРЖАНІЕ: 1 томъ: Паданіе еврейскагоцарства. Созданіе Мишны и Талмуда. томъ: Сабуреи, Гаоны. Появленіе караимства. 3 томъ: Іудейско-испанская культура. Іегуда Галеви. Моисей Маймонидъ. 4 и 5 томы: Гоненія на евреевъ. Испанская инквизиція и изгнаніе евреевъ изъ Испаніи томъ: Талмудъ и гуманисты. Марраны. Польскіе евреи. 7 томъ: Дальнѣйшая судьба евреевъ. Спиноза. 8 томъ: Эпоха Мендельсона. Судьба евреевъ до 1848 года.

По русски „Исторія евреевъ Гретца" до сихъ поръ не явилась въ полномъ переводѣ, нѣмецкій ентекстъ стоитъ свыше 30 рублей. Вся она представляетъ изъ себя величественное національное твореніе еврейскаго народа.

или роскошный томъ „БИБЛІОТЕКИ АРМЯНСКИХЪ ПИСАТЕЛЕЙ".

СОДЕРЖАНІЕ: Исторія Арменіи. Древніе писатели. Фаустъ Византійскій. Зенобъ Глакъ. Моисей Хоренаци, Корьюнъ. Егише. Лазарь Парбскій. Езникъ. Историческіе комментаріи.

Въ газетѣ будетъ участвовать знаменитый ГЕРЦЛЬ.

Подписная цѣна въ годъ безъ доставки въ Кіевѣ 5 руб., съ доставкой и пересылкой— 6 руб. За полгода безъ доставки 3 руб., съ доставкой и пересылкой—6 руб., заграницу 5 руб. и 8 руб.

Адресъ редакціи: Кіевъ. Владимірская, д. 79. кв. 15. Подписной годъ съ 1 Апрѣля 1902 г. по—1 Апрѣля 1903 г.

Редакторъ-издатель прив. доц. А. Н. ГРЕНЪ

Открыта подписка на 1902 годъ

на ежемѣсячный дѣтскій и педагогическій журналъ

„ДИТЯ"

(5 годъ изданія).

Журналъ «Дитя» даетъ въ теченіе года 12 книжекъ иллюстрированнаго дѣтскаго журнала, 12 номеровъ педагогическаго отдѣла и 12 премій для склейванія и вырѣзыванія, а именно: «Дѣтскій Театръ», «Паяцъ», „Циркъ", «Дѣтская Мебель», „Лагерь». Все изданіе посвящено школьной реформѣ и самообразованію дѣтей и юношества, вслѣдствіи чего подъ видомъ разсказовъ въ немъ будетъ дано масса свѣдѣній по исторіи, естественнымъ наукамъ, даже французскому и нѣмецкому языкамъ и пр. Между прочимъ въ журналѣ помѣщается „Всеобщая Исторія по сочиненіямъ Жуковскаго".

Подп. цѣна въ годъ 2 руб. безъ дост. съ дост. въ Кіевѣ 2 руб. 50 коп., съ пер. во всѣ гор. 3р

Адресъ редакціи: Кіевъ, Владимірская, д. 79 кв. 15.

(Ф.) 3—1 Редакторъ издатель прив. доц. А. Н. ГРЕНЪ

СЕКРЕТЪ КРАСОТЫ
ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ
МЫЛО
МОЛОДОСТИ
А. СІУ и К°
МОСКВА.
20 коп. кус.

(М.) 168632 6—6



ПЕРЕЦЪ

ЧЕРНЫЙ и БѢЛЫЙ,

МОЛОТЫЙ, ВЪ ЖЕСТЯНКАХЪ СЪ ПРОСѢИВАЮЩЕЙ КРЫШКОЙ, А ТАКЖЕ ВЪ ГРАНЕНЫХЪ ФЛАКОНАХЪ ДЛЯ СТОЛА, РАЗМОЛА НА ФАБРИКѢ.

Т-ва „Р. КЁЛЕРЪ и К° въ Москвѣ"

ИМѢЕТСЯ ВЪ ПРОДАЖѢ ВЕЗДѢ У ВСѢХЪ ЗНАЧИТЕЛЬНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.

Подмѣси къ молотому перцу,—такое обычное явленіе и настолько перешли границы, что готовый молотый перецъ часто продается дешевле немолотаго, цѣльнаго. Ярлыкъ-же Т-ва Р. Кёлеръ и К°, какъ извѣстно всѣмъ, служитъ вѣрнымъ ручательствомъ въ неподдѣльности товара.

Равнымъ образомъ всѣ другія ПРЯНОСТИ и приправы для стола и кухни, носящія ярлыкъ и торговую марку Т-ва, представляютъ собою лучшіе изъ имѣющихся въ торговлѣ сортовъ.

(М.) № 8 2—1

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и К° МОСКВА.

(М.,90634 52—52

ՇԵՐԻՆԳԻ ՊԵՊՍԻՆԵԱՆ ԷՍԵՆՑԻԱ

պատրաստւում է զաղտնի խորհրդական պրոֆեսոր դր. Օ. Լիբրէյխի ցուցմամբ

ՍԱ ԱՌՆՉԵՑՆՈՒՄ Է

գիրակրի և խմիչքների գործածութեան մէջ եղած

ԻՍԼՈՐ ԻՈՒԹԵՆ ԲՈԼՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Շերինգի պեպսինեան էսսենցիան

գրգռում է ախորժակն ու մարսողութիւնը,

[illegible] [illegible] Է

ԱՅՆ ԿԱՆԱՆՑ ԵՒ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ

որոնք ունին ջղայնոտութիւնից առաջացող ստամոքսի թուլութիւն

Բուժում է սակաւարիւնութիւնը և Խոտերեան

ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՍՏԱՄՈՔՍԸ

SCHMING'S GRÜNE APOTHEKE Berlin N. Chausseestrasse 19 / Վաճառւում է Ռուսիայի դեղատնային խանութներում

(М) 205895 12 4

Доз. цензурою Тифлисъ 1902 г. Мая 10 го дня

Տպարան Ա. Ի. Եառովի

Типографія А. И. Петрова Голов. п № 12 Телефонъ № 387.